ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2024 թվականի N 1090-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշումով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով նախագիծը

որոշում եմ՝

1. Տրամադրել շինարարության թույլտվություն, թույլատրել կատարելու համայնք Ալավերդի, գյուղ Աքորի, 1-ին փողոց, 4-րդ փակուղի, 3 հասցեում գտնվող Վարդգես Հմայակի Ասլանյանին, Անահիտ Գերասիմի Դալլաքյանին, Մանուշ Վարդգեսի Ասլանյանին, Եդգար Վարդգեսի Ասլանյանին, Արմինե Վարդգեսի Ասլանյանին համասեփականության իրավունքով պատկանող հողամասում մառան կառուցելու շինարարական աշխատանքները:
2. Շինարարական աշխատանքներն սկսել լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված, համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և համայնքապետարանի կողմից տրամադրված շին. Թույլտվության առկայության դեպքում:
3. Ալավերդի համայնքի ավագանու 26.12.2023 թվականի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 132-Ն որոշման համաձայն համասեփականատերերից Վարդգես Հմայակի Ասլանյանից, Անահիտ Գերասիմի Դալլաքյանից, Մանուշ Վարդգեսի Ասլանյանից, Եդգար Վարդգեսի Ասլանյանից, Արմինե Վարդգեսի Ասլանյանից գանձել 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2024թ. հուլիսի 22
ք. Ալավերդի